ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № « եռակողմ պայմանագրի համարը » / « **** »

ք. Երևան « օր/ամիս/տարի » թ.

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, «Ա. Ի Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» Հիմնադրամի և « թեմայի ղեկավարի անուն ազգանուն » միջև « եռակողմ պայմանագրի կնքման ամսաթիվը /օր/ամիս/տարի/ » թ.-ին կնքված № « եռակողմ պայմանագրի համարը » պայմանագիրը (այսուհետ՝ «Թեմայի պայմանագիր»),

« անուն ազգանուն » ը, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում՝ անվանվում է «Թեմայի Ղեկավար», մի կողմից

և

«Ա. Ի Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» Հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ») ի դեմս տնօրեն Գևորգ Քառյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնանդրության հիման վրա, մյուս կողմից,

հետագա շարադրանքում միասին անվանվելով «Կողմեր», իսկ յուրաքանչյուրը առանձին՝ «Կողմ», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, Հիմնադրամը պարտավորվում է Թեմայի Ղեկավարին յուրաքանչյուր ամիս վճարել Թեմայի պայմանագրով սահմանված գումարը, իսկ Թեմայի ղեկավարը պարտավորվում է ամբողջությամբ իրականացնել Թեմայի պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները, ինչպես նաև պատշաճ կերպով կատարել պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին Թեմայի պայմանագրով սահմանված աշխատանքները (այսուհետ՝ «Թեմայի աշխատանքներ»):

2. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

2.1. Թեմայի պայմանագրով սահմանված Թեմայի աշխատանքները կատարել անձամբ, ինչպես նաև Թեմայի կատարման համար, ներգրավել երրորդ անձանց՝ Թեմայի կատարողների:

3. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

3.1. Թեմայի Ղեկավարը երաշխավորում է աշխատանքների կատարման համար իր պատշաճ մասնագիտական որակավորումը և քաղաքացիաիրավական իրավունակությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Թեմայի ղեկավարը պարտավոր է՝

4.2. Թեմայի պայմանագրի նախահաշվով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Թեմայի պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով,
4.3. Թեմայի աշխատանքները կատարել Թեմայի պայմանագրի առաջադրանքին համապատասխան,
4.4. Հիմնադրամին ներկայացնել Թեմայի պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման յուրաքանչյուր 12-ամսյա փուլի մասին ընթացիկ հաշվետվություն, իսկ Թեմայի պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտից հետո՝ ամփոփիչ հաշվետվություն: Ընթացիկ հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր փուլի իրականացման ժամկետի սկզբից հաշված 12-րդ ամսվա առաջին 20-օրյակում, իսկ ամփոփիչ հաշվետվությունը՝ Թեմայի պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման ավարտից առաջ՝ 10 օրվա ընթացքում,
4.5. Հիմնադրամին տեղեկացնել իր և (կամ) Թեմայի պայմանագրի կատարողների, երկու ամսից ավելի բացակայելու մտադրության մասին՝ բացակայությունից առնվազն մեկ շաբաթ առաջ,

4.6. Թեմայի պայմանագրով նախատեսված արդյունքը ստանալու անհնարինությունը հայտնաբերելու կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել Հիմնադրամին:
4.7. Թեմայի պայմանագրով նախատեսված աշխատանքների դիմաց Կոմիտեի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծել սույն Պայմանագիրը:
4.8. Թեմայի պայմանագրով նախատեսված հետազոտության արդյունքներին վերաբերող գիտական հրապարակումների մեջ՝ ներառյալ գիտաժողովի նյութերը (proceedings), հիշատակել Հիմնադրամի անվանումը:
4.9. Հիմնադրամը իրավունք ունի՝
4.10. Չհաստատել Թեմայի պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման յուրաքանչյուր 12-ամսյա փուլի մասին ընթացիկ հաշվետվությունը, ինչպես նաև ամփոփիչ հաշվետվությունը, եթե Թեմայի ղեկավարը թույլ է տվել Թեմայի պայմանագրի պայմանների խախտում: 4.11. Թեմայի պայմանագրի ընթացքում տնօրինել Թեմայի պայմանագրի նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսված միջոցները իր մատուցած ծառայությունների ծախսերը հոգալու նպատակով,
4.12. Հիմնադրամի գիտական խորհրդի և Թեմայի պայմանագրի կատարողների համաձայնությամբ Կոմիտե ներկայացնել միջնորդություն՝ Թեմայի ղեկավարի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության հիմքով Թեմայի ղեկավարի փոփոխություն կատարելու մասին:
4.13. Հիմնադրամը պարտավոր է՝
4.14. Թեմայի Ղեկավարին տեղյակ պահել Թեմայի աշխատանքների իրականացման վերաբերյալ Կոմիտեից ստացված ֆինանսական, կազմակերպչական և Թեմայի պայմանագրից բխող այլ հարցերով ընդունված որոշումների, հրամանների, հրահանգների մասին,
4.15. Հետազոտության ավարտվելու օրվա դրությամբ չօգտագործված ֆինանսական միջոցները մեկշաբաթյա ժամկետում վերադարձնել Կոմիտեի համապատասխան հաշվին:

5. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

5.1. Հիմնադրամը պարտավորվում է Թեմայի պայմանագրի միջոցներից և Թեմայի պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար, Թեմայի Ղեկավարին յուրաքանչյուր ամիս վճարել վարձատրություն՝ «վարձատրության չափը թվերով» , («վարձատրության չափը բառերով» հազար) ՀՀ դրամի չափով (այսուհետ՝ «Վարձատրություն»):

5.2. Կողմերը համաձայնվում են, որ սույն պայմանագրի 5.1 կետում նշված վարձատրության գումարը Հիմնադրամը Թեմայի Ղեկավարին է վճարում մինչև հաջորդ ամսվա 15-ը՝ անկանխիկ հաշվարկով՝ սույն պայմանագրի ստորագրության տողից առաջ նշված՝ Թեմայի Ղեկավարի բանկային հաշվին դրամական փոխանցում կատարելու միջոցով:
5.3. Սույն պայմանագրի 5.1. կետում նշված գումարն իր մեջ ներառում այդ կապակցությամբ վճարման ենթակա բոլոր հարկերի և պարտադիր այլ վճարների գումարները, և համապատասխան հարկային ու այլ պարտավորությունները, որոնք կատարվում են Հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն:
5.4. Սույնով Կողմերը համաձայնվում են, որպեսզի Հիմնադրամը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարի անհրաժեշտ բոլոր ֆինանսական գործողությունները և վճարումները Թեմայի պայմանագրի նախահաշվի՝ «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» և «Գործուղումներ» ենթահոդվածներով Թեմայի պայմանագրին հատկացված միջոցների հաշվին (սահմաններում)՝ Թեմայի ղեկավարի կողմից Հիմնադրամին ներկայացված գրավոր հանձնարարականի և(կամ) պահանջագրի հիման վրա:
5.5. Կողմերը համաձայնվում են, որ Հիմնադրամը իրականացնելու է Թեմայի պայմանագրով սահմանված ֆինանսական միջոցների տնօրինումը, ինչպես նաև սույն պայմանագրի 5.4 կետում նշված ֆինանսական գործառույթները և վճարումները, քանի դեռ Կոմիտեի և(կամ) Թեմայի ղեկավարի կողմից Հիմնադրամին չի ներկայացվել գրավոր հանձնարարական և(կամ) պահանջագիր Թեմայի պայմանագրով սահմանված ֆինանսական միջոցների տնօրինումը դադարեցնելու մասին:
5.6. Կողմերը համաձայնվում են, որ սույն պայմանագրի 5.1 կետում նշված վարձատրության գումարը Հիմնադրամը Թեմայի ղեկավարին է վճարում մինչև հաջորդ ամսվա 15-ը՝ անկանխիկ հաշվարկով՝ սույն պայմանագրի ստորագրության տողից առաջ նշված՝ Թեմայի ղեկավարի բանկային հաշվին դրամական փոխանցում կատարելու միջոցով:

5.7. Սույն պայմանագրի 5.1 կետում նշված գումարը Հիմնադրամը վճարում է Թեմայի ղեկավարին՝ բացառապես Թեմայի պայմանագրով նախատեսված ֆինանսավորման գումարը Հիմնադրամի բանկային հաշվին փոխանցվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
5.8. Կողմերը համաձայնվում են, որ եթե Թեմայի պայմանագրով և ֆինանսական նախահաշվով սահմանված գումարը չի փոխանցվում Հիմնադրամի բանկային հաշվին, ապա Հիմնադրամը Թեմայի Ղեկավարին համապատասխանաբար չի փոխանցելու սույն պայմանագրի 5.1 կետում նշված վարձատրության գումարը:
5.9. Սույն պայմանագրով չկարգավորված և թեմայի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական այլ ծախսերը, կողմերի համաձայնությամբ կատարվելու են Թեմայի պայմանագրի ֆինանսական միջոցների հաշվին՝ Հիմնադրամին ուղղված Թեմայի Ղեկավարի գրավոր հանձնարարականի հիման վրա:

6. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և դրա պայմանները Կողմերի համար պարտադիր են դառնում՝ « օր ամիս տարի թվերով» թ., « օր ամիս տարի բառերով» պահից և գործում է մինչև Թեմայի պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման ժամկետի ավարտը՝ « օր ամիս տարի թվերով» թ., « օր ամիս տարի բառերով»

6.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են համարվում դրա առարկայի վերաբերյալ Կողմերի միջև նախկինում եղած բանավոր կամ գրավոր համաձայնություններն ու պայմանավորվածությունները:
6.3. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել և (կամ) սույն պայմանագրի գործողությունը կարող է կասեցվել պայմանավորված Թեմայի պայմանագրի կասեցումով:
6.4. Սույն պայմանագրի առանձին դրույթի կամ մասի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս դրույթների կամ մասերի անվավերությանը:

7. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում վավերական է, եթե կնքված է գրավոր ձևով:

8. ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

8.1. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի գրավոր համաձայնությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Կողմերը կրում են գույքային և այլ պատասխանատվություն սույն պայմանագրից բխող իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և այլ նորմատիվ ակտերին համապատասխան:

9.2. Կողմերը ազատվում են պատասխանատվությունից սույն պայմանագրով իրենց պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակի չկատարելու համար, եթե դրանց չկատարումը հանդիսանում է անհաղթահարելի ուժի հանգամանքների հետևանք:

10. ԿԻՐԱՌՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Սույն պայմանագրի նկատմամբ, ներառյալ՝ Կողմերի իրավունքների և պարտականությունների բովանդակության, մեկնաբանման, կատարման, չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքների, դադարման, առոչինչ լինելու և դրա հետևանքների, պայմանագրից ծագող պահանջի զիջման և պարտքի փոխանցման առնչությամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենքները և այլ իրավական ակտերը:

10.2. Սույն պայմանագրից կամ դրա կապակցությամբ ծագող բոլոր վեճերը, տարաձայնությունները և պահանջները, ներառյալ՝ դրա կատարմանը, խախտմանը, դադարեցմանը կամ անվավերությանը վերաբերող, ենթակա են կարգավորման՝ Կողմերի միջև բանակցությունների և խորհրդակցությունների ճանապարհով, իսկ, համաձայնության չհասնելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության իրավասու դատական ատյաններում:

11. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

11.1. Սույն պայմանագրի դրույթները մեկնաբանելիս՝ Կողմերը, ինչպես նաև դատարանը պետք է ելնեն դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Այդպիսին պարզ չլինելու դեպքում պայմանագրի որոշակի դրույթի մեկնաբանությունը որոշվում է՝ այն սույն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.1. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԻՄՆԱԴՐԱՄ	ԹԵՄԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ
«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» Հիմնադրամ ՀՎՀՀ 01202364 ՀՀ, Երևան,Ալիխանյան եղբայրների փող.,2 շ.	Անձնագիր « **** » , տրված « **** » թ., ՀԾՀ՝ « **** » Բանկ: « **** » Հ/Հ « **** » բ. « **** » , « **** » փ., « **** » շ., բն. « **** »
Տնօրեն՝ Գ. Քառյան	« անուն ազգանուն »
Կ.Տ.	